

Մըանով մեր երկրագործի կեանքը մասամբ պատկերացրինք, այժմ դառնանք նրա միւս կողմերից մի քանի օրինակներ տալու:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԲԷՋ ԵՂՆԹ ՊԸՑՄԸՆՆԵՐԻՑ

Երկրագործութիւնը մեր երկրում ընդհանրապէս պարունակում է իր մէջ մի քանի կարևոր պայմաններ, որոնք գործադրելով՝ երկրագործի աշխատանքը մասամբ թեթևանում է և բաւականին օգտաւէտ է նրա համար: Եթէ իւրաքանչիւր տուն միայն ինքն իրանով ձեռնարկէր գործի, այն ժամանակ երկրագործութիւնը շատ անաջող պայմանների կը հանդիպէր, որովհետև մեր երկիրը Եւրոպայի նման հարուստ չէ, թէ գործը հեշտացնող երկրագործական գործիքների 1) և թէ նիւթական կողմից, որ կարողանային առանձնապէս—ամեն միւս իրայ համար գործել: Այս իսկ դժուարութիւնները միշտ ի նկատի առնելով, երկրագործները մի քանի ծանր ու դժուար պարագաներում, միմեանց փոխադարձ պայմանական օգնութիւն են տալիս, որպէս զի կարողանան ըստ չափու կարողութեան օգտուիլ: Այդպիսի պայմանական գործերից միւսը մեղաւորում գութան լծելն է, որը յիշուի շատ դժուար էր, եթէ բոլոր ծանրութիւնը բարդուէր մի ընտանիքի վերայ:

Գութան լծելու համար հարկաւոր է 10—12 զոյգ եղ ու գոմէշ և 8—10 հոգի մարդ, որ հնար լինի մեր կողմերում գութան բանացնել: Իսկ այդքան պատրաստութիւն մի ընտանիքում շատ դժուար է գտնել: զրա համար էլ հետևեալ պայմաններով են լծում գութանը:

- 1) Միզանում համարեա դեռ չը գիտեն, թէ Եւրոպայում երկրագործութեան մեծ մասը, ոչ թէ մարդով այլ կատարելագործուած մեքենաներով են կատարում: Չեղջին տարիքը, բարեմիտ մարդկերանց խօրհրդով, երկրագործներից մի քանիսները, թէպէտ փորձի համար երկաթէ գութաններ բերել տուին Եւրոպայից, բայց նրան էլ չը հաւանեցին, թէ «մեր պապական հին գութանի նման չի վարում»:

1, Երբ գալիս է ժամանակը, (յունիսի սկիզբներին) գութանատէրերը կանչում են դրացիներից, որոնք տաւարից և մարդից այնքան պատրաստութիւն ունենային, որ համապատասխանէր լրացնել մեր վերև յիշած թիւը: Ամեն ինչ պատրաստելով՝ դուրս են գալիս դաշտ և սկսում գիշեր ու ցերեկ վարել: Գութան լծելու պայմանները վաղուց յայտնի է ամենին. «Ժամամ հախս» (24 օր) լծելիս՝ նախ և յառաջ երեք օր գութանատիրոջ համար են վարում, իբրև գութանի վարձ. նրանից յետոյ հերթով «մօտկամները» համար: — Իւրաքանչիւր հօտադին մի օրավար. մաճկալին երկու օրավար. մի զոյգ գոմէշին երկու օրավար և մի զոյգ եղին մի օրավար: 24 օրը լրանալուց յետոյ՝ մի օր էլ ուրիշի համար փոխով «մատաղի» են վարում և այդ փոխով մատաղ անում բաժանում: Այսպէս, 25 օրը լրանալուց յետ, երեկոյեան պահուն, հօտադները աղլուխները ճիւղտների ծայրին կապած դրօշակ են անում և ամեն մինը իր հօրիքի լծին նստած, ուրախութեան երգերով գալիս են վիւղ ու գութանը տանում յանձնում տիրոջը. ուր արդէն ընթրիքը պատրաստ լինելով, ընթրում են և շնորհակալութեամբ վնում իրանց բան ու գործին:

2, Գիւլատնտեսութեան մէջ արդիւնաբեր, սպտաւէտ և աչքի ընկնող ճիւղերից մէկը անասնապահութիւնն է, որ միայն կաթնից զանազան ուտեստներ—եղ, պանիր, դայմադ, թան, մածուն են պատրաստում: Այս ամենը պատրաստելու համար, մի տուն բաւականին տաւար պէտք է ունենայ. և այդ շատ դժուար է մեր երկրացոց համար. որովհետև փոյլի և հողի պակասութիւնը որ կայ՝ ամեն ինչ լիւ է: Այդ իսկ պատճառով էլ կոտոյգով տները, իրանց ունեցածի հետ, մի քանի կով էլ ուրիշներից վերառած, (իւրաքանչիւր կովին մի փութ եղ և մի լիտր պանիր վճարելով տիրոջը). Մայիսից մինչև Սեպտեմբերի վերջը դուրս են գալիս Եւջու ու այնտեղ 2—3 ընտանիք, նայելով ունեցած տաւարների քանակութեանը, միմեանց հետ «խաբ» են անում. (տաւարի կաթը չափով փոխարինաբար տալիս են միմեանց): Այդքան ժամանակամիջոցում ամեն մի ընտանիքին երկու անգամ կաթ ստանալու

հերթ է դալիս: ուրիմն միջին թուով, երկու նուագում, իւրաքանչիւր ընտանիք $1\frac{1}{2}$ ամիս իր փոխառուներից 40—50 կովի կաթ է ստանում, որից ահագին քանակութեամբ եղ ու պանիր է պատրաստում իր ընտանեաց և ծախելու համար: Իսկ սրա հակառակ, եթէ գիւղացին իր սեփական տաւարից պատրաստելու լինէր յիշեալ ուտելիքները, այն ժամանակ չէր կարող. սրովհետեւ շատ քչերը կան, որ 6—7 կով ունին, իսկ մնացածները 2—3 կովից աւելի չունին: Մսեղէն և այլ կերակուրներից զուրկ, միայն կաթնեղէնով կերակրուող գիւղացու համար այդքանը շատ քիչ է: Թող թէ՛ նա այնքան եղ ու պանիր կարողանար պատրաստել, որ թէ՛ իր ընտանեաց բաւէր և թէ՛ մի մասն էլ վաճառէր: Քիւլացիք վաղուց հաշուած ու մտածած լինելով իրանց օգուտն ու վնասը, այդպիսի դէպքում ուրիշների կովերը *«հասցան»* տանելն են մէջ բերել, որ իրանց արգիւնաբերութեան համար ամենաօգտաւէտ և ձեռնտու պայմաններից մէկն է:

3, Երկրագործ ժողովրդեան պէքատ դասակարգի մարդկերանցից ոմանք, տաւարի և նիւթական միջոցների սակաւութեան պատճառով, չեն կարող իրանց պատկանեալ սեփական հողը անձամբ մշակել. այլ տալիս են կարողատէր անձանց այս և այն պայմաններով մշակելու, որից հազիւ թէ $\frac{1}{3}$ մասը օգտւում են: Զօրօրինակ. մէկը իր ունեցած 5—10 օրավար հողը մի քանի տարի ժամանակով տալիս է իր դրացուն, որ մշակէ—վարէ, ցանէ, քաղէ և ծեծէ: Նա այդ բոլորը յանձն է առնում. նախ՝ որ գոյացած արգիւնքի միջից ցա նած ամբողջ սերմը վերցնում է. երկրորդ՝ իր հնձելու և ծեծելու փոխարէն բոլոր դարմանն է վերառնում. և երրորդ՝ մլնացած արգիւնքը մէջտեղից նոր հաւասար կէտ է անում հոյատիրոջ հետ: Ահա այս է կիսովի ցանելու պայմաններից մէկը:

Ի դէպ է յիշել Չիրակի պտղաբերութեան ողբանութեան մասին: Մեր երկրում ամենաառատ տարին երկրագործը ստանում է ոչ աւելի քան 10—12% արգիւնք. (մէկ սօմարին 10—12 սօմար). իսկ նուազ տարիներում 4—6% և երբեմն աւելի սակաւ: Այսպիսի աննշան արգիւնաբերութիւնը պէտք է

վերադրել երկու գլխաւոր պատճառի. հողի պակասութեան և անջրդի լինելուն: Զիրակում հողը եթէ հաւասարապէս բաժանելու լինէր, իւրաքանչիւր անհատին հազիւ թէ կէս օրավար հող բաժին ընկնի, որի արդիւնքով թէ պիտի կերակրուի և թէ ընտանեկան ու արտաքին միւս կարեւոր ծախքերը հոգայ. ուրեմն դուրս է գալիս որ բնակչաց թուի հետ համեմատելով՝ հողը շատ քիչ է: Մի և նոյն հողը ամեն տարի անընդհատ պէտք է ցանեն, ըստորում, եթէ թողնեն հանգստացնելու, պարարտացնելու և ըստ կարգին մշակելու՝ այն դէպքում մարդիկ—իրանք պէտք է քաղցածութիւնից մեռնեն. որովհետև այնքան հող չկայ, որի մի մասը ցանելու համար դործադրեն և մի մասն էլ ամառը հերկելու: Իսկ ջուրը (ոչ թէ խմելու, այլ երկիր ջրելու) այնքան սակաւ է, որ դրա մասին խօսք ասելն անգամ աւելորդ է:

4. Բացի սրանցից, կայ և մի այլ պայման, որ երկրագործ աղքատ դասակարգը դործադրում է ոչ իւր դրացեաց, այլ կողմնակի վաշխառուների հետ, որոնք խեղճ գիւղացուն հարստահարելու ոչ մի ստոր ու անարգ միջոց չեն խնայում: Գիւղացին տնական անհրաժեշտ պէտքեր ունի հոգալու. ունեցած մասնաւոր արդիւնաբերութիւնները գին չեն անում, փողի ստիպողական կարիքները հարկադրում են նրան դիմել փոխառութեան: Խեղճը յաճամայից դիմում է վաշխառուներից մէկին. իր կամքը ենթարկում նրա կամաց և ամեն մի անխիղճ առաջարկութեան, «հրամանը հս, լաւ կէղնի, թող քու ըսածիդ պէս էլնի... ջուխտ աչքիս վրայ...» միշտ ստրկօրէն պատասխանում, որպէս զի չ'զլանայ փող տալու: Անգութ մարդը 40—50 ռուբլի տալով, գիւղացուն պարտաւորում է, որ յիշեալ գումարի տոկոսիքի փոխարէն, 20—25 կօտ ցորեն ցանէ իր արտի մէջ, քաղէ, ծեծէ և գոյացած բոլոր արդիւնքը—ցորեն թէ դարման ամբողջապէս բերէ յանձնէ պարտատիրոջը. և կալից յետոյ էլ մայր գումարը վերադարձնէ՝ կամ մուրհակը նորոգէ, ամսական թումանին մէկ ապասի տոկոս տալով: 2ը մոռանանք ասել, որ նրա այդքան աշխատութեանց՝ (եթէ հաշուելու լինի մարդ, մայր գումարից աւելի արժէք

ունի)։ պարտատէրը անխղճաբար տիրանում է միայն իր տուած փողի չնչին տոկոսիքի համար։

Հասարակ երկրագործը վերոյիշեալ պայմանների նման մի քանիսի մէջ դտնուելով, որոնցից ոմանք իրան ձեռնտու են և ոմանք ոչ, համարեա միշտ ենթարկուած է թշուառութեան և աղքատութեան։

ԳԻՒԼԱԿԱՆ ԺԱՂԱՎՐԴԻ ԳՆՈՒԿԱՐԳԻՆԵՐԸ

Գիւղական հասարակութիւնը, իրանց մէջ նախասահմանեալ օրէնքով, բաժանւում են ± գլխաւոր դասակարգերի, այսինքն՝ «համբայ», «հէս համբայ», «հաւեթ» և «տաւայ»։ Եթէ ուրիշ խօսքով ասելու լինինք, համապատասխանում են ազնուական, հարուստ, միջակ և աղքատ դասակարգերին։

Գիւղական բոլոր ծախքերն ու գործերը, այն է՝ ծխի պատկանեալ հողը, արքունի հարկը, կոռն ու բէգարը և գիւղի բոլոր համայնական ծախքերը բաժանուած են յիշեալ դասակարգերի վերայ, իւրաքանչիւրի ձեռին եղած հողի քանակութեան չափով։

Բացի այս, ընդհանուր առմամբ, մի գիւղի ժողովուրդը դարձեալ բաժանւում է երկու որոշ դասակարգի, որ իրանց լիզումով կոչւում են «հաւաւ ուսաւ» և «եօլ»։ Մատաղ ուտողները՝ օրէնքի առաջ ճանաչուած հարկատու և համայնական բոլոր ծախքերին, առանց բացառութեան, մասնակցողներն են. իսկ եօզերը, թէ և ըստ կարողութեան դարձեալ հարկատու են. բայց բացառապէս, գիւղի հասարակական ծախքերին չեն մասնակցում իրանց աղքատութեան պատճառով։

Գիւղացոց հողերի տակաւութեան պատճառով, իւրաքանչիւր 3—4 տարին մի անգամ, իշխանութեան թոյլտուութեամբ և հասարակական վճռով, նոր հողաբաժութիւն է լինում «ջնի» կամ «հաւեթի» վերայ, որ տան անգամաց թուլին համեմատ, ոմանց հողն աւելանում է և ոմանցը պակսում։